

Տուր փրկութիւն հզօր բազկաւ այս խաթարեալ իմ ազգին,
 Եւ քաղցրասցի ժանտ դառնութիւն մահահրաւեր բաժակին:
 Ուր մարդկային կասի հանճար և լքանի զօրութիւն,
 Ուր սպառի յոյսն առ ի մէնջ, և ուր արուեստք տեղի տան,
 Լնդ, Լստուած իմ, քո զօրութիւն փոյթ ժամանէ յօգնութիւն,
 Լնդ և բաժակըն դառնութեան փոխի յախորժ քաղցրութիւն:
 Եթէ կամիս, զիտեմք ո՛վ Տէր, զի կարող ես փութապէս
 Սրբել, փրկել, կենդանործել և տալ կանգնումս հրաշապէս,
 Լպա թէ ոչ այս հէք վիճակ իղէ բաժին մեր կենաց,
 Պաշտելի է դարձեալ կամք քո, լիցի բոտ քոյդ սուրբ կամաց:
 Եւ մէք յօժար յաւիտեան
 Հակեալ ճակատ հլութեան
 Կամաց Վհիդ բարերար,
 Կամք գթութեանդ սպաստան,
 Եւ մինչ յառակ աղեախց,
 Կամեմք յօժար բաժակին:
 Կ. Յ. Ե.

ԼՂԳՅԻՆ ԵՐԹԼՈՒԹԻՒՆ.

Երաժշտութիւնը մարդոց հոգւոյն և սրտին զգացման ուժաշանքն, անոր ծագումը մարդկութեան ժամանակակից (Ճնճ. Դ. 21), իւր ներդրութիւնը խիստ ազդու և միանգամայն ժողովուրդի մը կոչումութիւնը կրթելու ջօրաւոր միջոց մը ըլլալը, յայտնի ճշմարտութիւններ են: Ոչ ապարէն Որփէոսի քնարին որանելէքը, Դաւթի տառնաղիկին ազդեցութիւնները և ասոնց նման գէպքեր հանրածանօթ են. ոչ ապարէն մարդս ընտպէս երաժշտական ձայններ զգածուելուն համար է որ իւր բոլոր կենացը մէջ անոր աղջեցութեանը ենթակայ է. օրօրոցին մէջ անով կը ննջէ, ուրախութեան մէջ անով կը զուարճանայ, տրտմութեան մէջ անով կը սփոփի, և մինչև ի յաւիտեան կանուխեան գուռը անոր տխուր միտման ջնջումը կ'երթայ: Ուստի ի սկզբանէ հետէ մարդկային ազգը ունեցած է երաժշտութիւնը, և ի գօրծ ոմէր է զոյն իւր կրօնական պաշտամանց, քաղաքական հանդիսից և ընկերական կենաց մէջ: Թողունք մարդկային ազգը, ոչ ապարէն Հրեղինաց գուռներն ու իրենց Որբասացութիւնը և Վելուրը երջանակ հոգեղէն հնչմամբ առ բարձրեալն Կամուռէլ մատուցանելն քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ալ ընդունուած որդական սանգութիւն մ'է:

Սակայն ինչպէս որ մարդկային ազգին ընդուն, ընկերական ու քաղաքական վիճակը և կրօնական համըմբը կանապան աղբաց մէջ տարբեր եղած է, նոյն

պէս և երաժշտութիւնն ալ այլ և այլ տարբեր գաղնակներ ու ձայնից դասաւորութիւններ ունեցած է, ազգի մը յառաջադիմութեան, զգացման և միտման համար ընտպած երկրին հանգամանայն համեմատ: այնպէս որ ազգ մը որչափ կիրթ ճաշակ, փափուկ զգայում և փառ երեւակացութիւն, նոյնչափ ալ կանոնաւոր ու գեղեցիկ երաժշտութիւն ունեցած է, և ընդհանրապէս ազգ մը որչափ յեռազեմ, կոշտ և անզգայ կամ մեղի ու թող եղած է, այնչափ ալ անգայնակ և անկանոն, կամ մեղի ու թող երաժշտութիւն մը ունեցած է: Հետեւաբար ազգի մը երաժշտութիւնն իւր հոգւոյն և զգացման արտօններն է: Սակայն թողլով այս ընդհանուր տեսութիւնը, մասնաւորեմք խօսքերնիս մեր ազգային երաժշտութեան վերայ:

Ամեն ազգի երաժշտութիւնը որչափ ալ իրարմ տարբեր, այլ հիմնապէս մէկ ըլլալով, միայն թէ ձայնից դասաւորութեան և ներդաշնակութեան կանոններով իրարմէ կը տարբերին, որուն համար մանրօրման օրինակներ ցուցնել զժաւար ըլլալով, կը յիշեցնենք միայն ազգի երաժշտութեան և բողոքական տարեւելեան տաճկական երկու դիտաւոր ճիւղերը, որոց երաժշտական ձայներու աստիճանները գրեթէ միեւնոյն են և միայն ել և էջի տարբերութեամբ կը զանազանին իրարմէ դաշնակի մասին. այլ հանգերմ այսու շատ եղանակներու մէջ ալ կը համեմայնին միմեանց հիմնական կազմութեամբ: Բայց իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող սահմանակից

ազգաց երաժշտութիւնը այս ատիւնն զգալի տարբերութիւն չունենալով, շատ կերպիւ կը նմանին միմեանց, ինչպէս և այսօր յարեւելս, ուր առհասարակ ազգ որչափ ալ իրարմ տարբեր՝ այլ էակէս մի և նոյն ձայնի գաւառներով թէմանք մի և նոյն եղանակներն ունին։ Այս պարագային մէջ երաժշտական տիրոջ գոշնակը գլխաւորապէս ոչն ազգինն է, որ կամ այս մասին աւելի յառաջագիծութիւն և կամ ինչ և իյէ կերպիւ ազգեցութիւն մը ունեցեր է միւս ազգաց վերայ, ինչպէս են այսօր յարեւելս Օսմանցիք, Պարսիկք, Արաբացիք և Եւրոպայի մէջ ալ այնպէս է, նախկին հելլենական և հռոմէական դաշնակն է որ տիրած է էսպէս ամեն ազգի մէջ, ի՞նչ և ատեն տոտեն այս մասին փոփոխութիւններ մտած են և ամեն ազգ ալ իրենց մասնաւոր ձայնին ունին իրարմ քիչ շատ տարբեր։

Այն ազգն ալ աշխարհին հին ազգերն մէկն ըլլալով, որչափ ալ միշտ ուրիշ ազգաց հետ յարաբերութեան մէջ և շատ անգամ անոնց ազգեցութեանը կենթակոյց եղած է, այսօր ամենայնիւ եթէ Արաբացիք և Պարսիկն նման գլխաւոր ու տարածուն երաժշտութիւն մ'ալ ունեցած չըլլայ, տակաւին պէտք է ունեցած ըլլայ իւր մասնաւոր երաժշտութիւնը, ազգային ձայնը և երաժշտական հնչիւնը, քանի որ Յամանակին ուրոյժ կառավարութիւն մը և մինչև այժմ ալ ընդունելով, անկախ եկեղեցի մը և ընկերական կեանք մը ունեցած է և ունի ցարգ։ Ի հարկէ մեր Գողթման գուստան ալ, այժման պարսկական խճամանն, արաբական հիճալին և այլոյ նման իւր մասնաւոր եղանակներն ունէր, և իւր քնարներն իրենց գողթման դաշնակն և իւր բանաստեղծ երգիչներն ալ իրենց ազգային ձայնին ու ազգային երաժշտական հնչիւնն ունէին, ըստք արգէտը այսօր մի քանի երաժշտական գործիքներու անուններէ և բառերէ և հատկապէս երգերէ զտա, ինչ ունինք ի ձեռքին, որք թէ և ազգային գրականութեան համար մեծ արժէք ունին՝ այլ ազգային երաժշտութեան համար գործնական օգուտ չեն բնծայեր, արդէօր մեր ազգն ալ այսօր եթէ ոչ իւր Գողթման եղանակները՝ դնէ իւր ազգային երաժշտական ձայնին ու հնչիւնը մասամբ իւր կրցած է սրահել, ինչպէս որ պատահած են մեզի վիճակակից ազգերը, Յոյք, Հրեայն, Պուլխարը, Աւստրալիացիք, և այլք։

Պէտք է շարունակուի։

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՍԵՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻԻՐ ԳԻՐԳԸ

(Հարունակութիւն. տես թիւ 3.)

ԳԼՈՒԽ Ժ.

Քրիստոսի առաջին Գալաթիք

Կը վախճամ, տէր իմ, որ Աստուած

Քրիստոսի երկու դարուստը յայտնի կը նշանակէ Աստուծոյ մարդարէի բերնով Բ. դուստը՝ ըսելով. «Արթնցիր, արթնցիր ու զօրութիւն հաղիք վերագո՛ւտիր» ըսողուիր⁽¹⁾։ Այլու անգամ կը կրկնէ արթնցիր՝ անոր երկու դարուստը ցոյց տալով։ Աւանակաբար, այսինքն յատկապէս ու յայտնապէս Տ. և Ճ. Գ. դուստներուն մէջ կը ցուցնէ Քրիստոսի առաջին դարուստը, այսինքն ինչ որ անոր շարժարանքներուն և արհամարհութիւններուն կը վերաբերին։ Աւելի տեսակաբար, այն է աւելի յատկապէս կը ցուցնէ՝ ըսելով. «Տեսանք զանիկայ որ չունէր եւրեւս, ոչ տեսիլ, և ոչ գեղեցկութիւն»⁽²⁾։ Անոր առաջին դարուստը իններորդ դարուն մէջ կը դնէ Ասայի՝ ըսելով. «մեզի մանուկ ծնաւ»։ և անմիջապէս կ'աւելորնէ անոր երկրորդ դարուստը ըսելով. «Աւելու խիստ ուժաւոր, հսկայ, հզօր. Վաւթի աթոռը նմանի որ հաստատէ զայն սկիզբէն մինչեւ ցաւիտեան»⁽³⁾։ Աւ. Օսթրալիա մարդարէն Թ. դարուն մէջ կը ցուցնէ զանիկայ աղքատ ու իշոյ վերայ նրա տած. և ասով ուրիշ ինչ նշանակել կ'ուզէ մարդարէն, եթէ ոչ անոր առաջին դարուստը պիտի ըլլայ խոնարհ, իսկ երկրորդը՝ հզօր ու փառաւոր։ Այս պէս Վանիէլ մարդարէն ալ, է դուստն մէջտեղուանքը կը ցուցնէ զանիկայ այսպէս ըսելով. «Կրտսնեի գիշերուան տեսիլքիս մէջ, և ահա երկնից ամպերուն վերայ՝ որդւոյ մարդոյ

(1) Զարթիր զարթիր Երուսաղէմ, և զգեցիր ըզզօրութիւն թաղիք քո։ Եսայ. ԺԱ. 9։

(2) Տեսայք մեք զնա՝ և ոչ դոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն։ Եսայ. ԺԳ. 2։

(3) Եւ անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, որանելի խորհրդակից. աստուած, հզօր, իշխան. հայր հանգերածելոյ աշխարհին և Եւ ևս աւելի զփառազօրութիւն ի վերայ իշխանաց նորա և առողջութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահման։ Յովթան Վաւ.